ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՀՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(01 ապրիլի 2012)

«Եւ ժողովուրդն որ առաջի երթային աղաղակէին եւ ասէին,
Օրհնութիւն որդւոյ Դաւթի,օրհնեալ որ գայ յանուն
Տեառն, օրհնութիւն ի բարձունս»:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Օրհնության եւ փառաբանության խոսքեր են մեր շուրթերին: Ինչպես երկու հազար տարի առաջ, այսօր եւս, փառաբանում ենք Տիրոջը եւ գովերգում Նրա հաղթական մուտքը Երուսաղեմ: Այսօր Հայ Եկեղեցին տոնախմբում է Ծաղկազարդը: Տերունի գեղեցկագույն տոներից մեկը, որ Մեր սուրբ հայերերը կոչել են «տօն Մեծ Արմաւենեաց»:

Առջեւում Բաղարջակերաց տոներն էին: Հին ուխտի ժողովուրդը գալիս էր Երուսաղեմ երկրպագելու իր հայրերի Աստծուն, այցելելու տաճար, որ Աստծու եւ հրեա ժողովրդի միության խորհրդանիշն էր: Այն մի վայր էր, որտեղ բարեպաշտ անձը հաղորդակցվում էր իր հայրերի Աստծու եւ նրա ժառանգության հետ: Հրեաստանի եւ աշխարհի տարբեր ծագերից ուխտի էին գալիս, մասնակցելու Պասեքի՝ Հին Զատկի արաղությանը, որը խորհրդանշում էր հրեա ժողովրդի ազատագրումը եգիպտական լծից: Սա նաեւ հույսի տոն էր: Տոն էր խոստումի, որ Աստված պիտի վերջնականապես ազատագրի իր ժողովրդին՝ վերականգնելով նրա փառքն ու հզորությունը:

Ահավասիկ, սիրելի քույրեր եւ եղբայրներ, մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, եւս մեկնում էր Երուսաղեմ: Որպես ուխտավոր նա մասնակցելու էր հենց այս տոնին, սակայն միայն մեկ տարբերությամբ. նա մեկնում էր որպես նոր Պասեք եւ նոր Զատիկ, որպես «գառն Աստծոյ» որ իր կյանքը զոհաբերեր, խաչի վրա իր արյան հեղմամբ ազատագրեր մարդկությանը մեղքից եւ նրա գերությունից, որպես սիրո գերագույն դրսեւորում, անձնազոհության միջոցով վերացներ մարդու եւ Աստծու միջեւ գոյություն ունեցող անջրպետը եւ բացեր դեպի Աստված տանող արքայության դռները՝ հրավիրելով մեզ ամենքիս հետեւելու իրեն: Ինչպես Հայ Եկեղեցու ոսկեդարյան հեղինակներց մեկը՝ Մամբրե Վերծանողը կասեր. «Տերը իջավ Երուսաղեմ, որպեսզի Մեզ բարձրացնի զավառն Աստվածակերտ»:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայներ-,

Ի դարի քրիստոնյա մտածողներից մեկն ասում է. «Լինել քրիստոնյա, նշանակում է լինել

ճանապարհորդ»: Քրիստոնեությունը ճանապարհորդություն է բառի բուն եւ խորը իմաստով: Ճանապարհորդություն է, որ հավատացյալին առաջնորդում է դեպի Աստվածային բարձունքներ եւ «Աստվածային գավառ»: Ճանապարհորդություն է, որ առաջնորդում է դեպի այն վայրը, ուր հրավիրում է մեզ մեր երկնային Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Սակայն հարց է ծագում. արդյոք մենք պատրա՞ստ ենք ընդունելու այդ հրավերը: Արդյոք մենք պատրա՞ստ ենք ընդունելու այդ հրավերը եւ քայլելու դեպի վեր տանող այս ճանապարհով՝ առանց սայթաքելու:

Գաղտնիք չէ, որ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, մարդը ձգտում է այդ բարձունքին: Ավելին՝ նա ձգտում է հասնել եւ նմանվել Աստծուն, ունենալ այն ազատությունը, ինչ ունի Աստված: Ժամանակակից մարդը նվաճել է տիեզերքը: Նա ոչ միայն տիրել է աշխարհին, այլեւ փոքրացրել է այն: Մի՞թե սրա ապացույց չէ այն փաստը, որ տանը նստած կարողանում ենք տեսնել եւ զրուցել հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող անձի հետ: Մյուս կողմից, սիրելիներ, հակառակ մարդկության այս վերընթացին, տակավին դեպի երկիր եւ դեպի անդունդ ձգողությունն էլ է զորավոր. շատանում եւ երիտասարդանում են բազմաթիվ մահացու հիվանդություններ, դժբախտ պատահարների, ինքնասպանությունների եւ այլ արատավոր երեւույթների թիվն աճում է, որոնք օրըստօրե ավելի են անհանգստացնում մեզ:

Եկեղեցու հայրերն այն տեսակետին են, որ մարդը գտնվում է ձգողական երկու դաշտերի միջեւ: Դաշտերից մեկը նրան դեպի վար է ձգում. դա չարությունն է, նախանձը, թշնամությունն ու ատելությունը, այն բոլոր չարիքները, որոն մեր հայրերն անվանում են մահացու մեղքեր: Մյուս դաշտը, սիրելիներ, դա Աստված է իր սիրով, որ մեզ ձգում է դեպի վեր:

Երրորդ եւ չորրորդ դարերի պլատոնական փիլիսոփաներին եւս հուզել են այս հարցերը: Նրանք ձգտել եւ ուղիներ են փնտրել, որպեսզի ազատագրվեն եւ մաքրվեն իրենց այս երկրի վրա պահող բեռից, եւ դրա ծանրությունից ազատվելու միջոցով հասնեն Բարձրյալին, Միակին եւ Ճշմարտին: Այս ուղուն են հետեւել նաեւ եկեղեցու շատ հայրեր, միայն այն տարբերությամբ, որ վերջինները բացահայտել են ճշմարտությունն ամբողջությամբ՝ ճշմարտության բացահայտման ճանապարհին գտնելով Քրիստոսին, որն այսօր մուտք գործելով Երուսաղեմ, ձեռքը դեպի իրեն է մեկնում, ինչպես կասեր Ս. Օգոստինոս Երանելին, հրավիրելով մեզ դեպի երկինք:

Պատմում են, որ մի գիտնական ջերմեռանդորեն աղոթում էր, որ Աստված իրեն ցույց տա դեպի երկինք տանող ճանապարհը: Օրերից մի օր նա ձայն է լսում երկնքից: Աստված նրան թելադրում է, որ գնա եկեղեցի եւ ճանապարհին կհանդիպի մի մարդու, ով կուսուցանի իրեն եւ ցույց կտա այդ ճանապարհը: Առավոտյան, երբ գիտնականը գալիս է եկեղեցի, դռան մոտ հանդիպում է մի աղքատ ծերունու:

-Բարի օր, հայրիկ,- ասում է գիտնականը:

-Ես չգիտեմ մի օր, որ ինձ համար բարի չէ,-պատասխանում է ծերունին:

-Այդ դեպքում մաղթում եմ, որ Աստված քեզ երջանկություն պարգեւի,- հավելում է գիտնականը:

-Ես չեմ հիշում, որ երբեւէ դժբախտ եղած լինեմ,-պատասխանում է ծերունին՝ նշելով, որ ինքը երբեք Աստծուց չի խնդրել երջանկություն կամ ունեցվածք, այլ մշտապես փառաբանել

է նրան, զոհացել է իր ունեցածով եւ խնդրել է, որ միայն Իր՝ Աստծո, կամքը կատարի: Այն, ինչ Աստված պարգեւել է իրեն՝ լինի դա ջերմ, պայծառ օր, թե՝ ցուրտ ու խավար, լինի դա քաղցրություն, թե՝ դառնություն, լինի դա հարստություն, թե աղքատություն, նա զոհացել է:

Մտավորականը հարցնում է.

-Իսկ եթե Աստծո կամքը լինի քեզ դժոխք ուղարկելը, այդ դեպքում ինչ պիտի անես: Ծերունին պատասխանում է, որ դա հնարավոր չէ, քանզի նա Աստծուն գրկել է երկու անբաժանելի ձեռքերով. Նրա մի ձեռքը հնազանդությունն է, իսկ մյուսը՝ սերը: Այս կերպ նա մշտապես Աստծո հետ է, իսկ ով Աստծո հետ է, ոչնչից չի վախենում:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ

Հիսուս մոտք գործեց Երուսաղեմ եւ մեր առջեւ բացեց արքայության դռները՝ հրավիրելով մեզ այնտեղ: Այսօր նա իր ձեռքն է մեկնում մեզ՝ սպասելով մեր պատասխանին: Այսօրվա պատգամն է, որ ամուր սեղմենք Նրա ձեռքը, եւ դա անենք սիրով եւ հնազանդությամբ:

Այսօր Վեհափառ Հայրապետի կողմից կատարվեց մանուկների օրհնության կարգ: Աղոթենք, որ մեր մանուկները եւս մեծանան Տիրոջ օրհությամբ, հնազանդության եւ սիրո առաքինությունները անպակաս լինեն իրենցից այժմ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն: